Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2017թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ 2018թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից 2017թվականին արտադրվել է 23.8 միլիարդ դրամի համախառն արտադրանք, որը կազմում է հանրապետականի 2.6 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ համախառն արտադրանքն ավելացել է 2.0 միլիարդ դրամով, կամ 8.4 տոկոսով: Մեկ շնչի հաշվով արտադրվել է 476 հազար դրամի գյուղատնտեսական արտադրանք:

Մարզում գյուղատնտեսական պիտանի հողատեսքերը կազմում են 189457 հեկտար, որից վարելահող 15712 հա, բազմամյա տնկարք 1711 հա, խոտհարք 5061 հա, արոտ 92310 հա, այլ հողատեսքեր 74664 հա: Ամեն տարի ցանքի տակ է դրվում 5500-6000 հեկտար, օգտագործվում է վարելահողերի 35-38 տոկոսը, կամ շուրջ 10.0 հազար հեկտար վարելահող դուրս է մնում ցանքաշրջանառությունից, որի գլխավոր պատճառն այն է, որ այդ վարելահողերը գտնվում են անջրդի պայմաններում, ունեն կտրտված ռելեֆ, ցածր բնական բերրիություն, որտեղ ցանք կատարելուց ստացվում է շատ ցածր բերք: Օգտագործվում է արոտների 28-30 տոկոսը, որը պայմանավորված է անասնագլխաքանակի պակասով: Մարզում կան մեծ հնարավորություններ ավելացնելու հատկապես մանր եղջերավոր անասունների գլխաքանակը:

Չնայած գարնանային ցրտահարություններին 2017թվականին նախորդ տարվա համեմատությամբ խաղողի արտադրությունն ավելացել է 205.3, իսկ պտղինը՝ 162.0 տոկոսով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի 60-65 տոկոսը ստացվում է անասնապահությունից: 2017թվականին արտադրվել է 26500 տոննա կաթ, 7100 տոննա միս, 22 մլն. հատ ձու և այլ մթերքներ:

Գյուղատնտեսական նշանակության հողերն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով, նախատեսվում է 2018թվականի նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածություններն ավելացնել շուրջ

700 հեկտարով: Հարցը հանագամանորեն քննարկվել է համայնքների ղեկավարների հետ:

Չնայած մարզի հողային ռեսուրսները հնարավորություն չեն տալիս ավելի մասիվ տարածությունների վրա ինտենսիվ այգիներ հիմնելու, անգամ այս պայմաններում նախատեսվում է 2018թվականին հիմնել 25 հա պտղի և խաղողի ինտենսիվ այգիներ, 70 հա այգիների ոռոգումն իրականացնել կաթիլային եղանակով, ինչպես նաև 3 հա պտղի և 4 հա խաղողի այգիներում տեղադրել կարկտապաշտպան ցանցեր:

Մարզում գործում են կաթի վերամշակման 5 ձեռնարկություններ, 2017թվականին մթերել են 1530 տոննա կաթ, արտադրվել է 190 տոննա պանիր և այլ կաթնամթերքներ: Նշված ձեռնարկություններում 40 մարդ ապահովված է մշտական աշխատանքով:

Մարզի 11 խաղող վերամշակող ձեռնարկությունները 2017թվականին մթերել են 1129 տոննա խաղող, արտադրել են 778 հազ. Լիտր գինի, որը կազմում է հանրապետությունում արտադրված գինու ծավալի 8.8 տոկոսը: Մնացած 1206 տոննա խաղողը մթերել են մարզից դուրս գործող գինու գործարանները՝ 1 կգ խաղողի դիմաց վճարելով 298 դրամ: Խաղող մշակող ձեռնարկություններում 120 մարդ ապահովված են մշտական, իսկ 130 մարդ ժամանակավոր աշխատանքով:

Եղեգնաձորի պահածոների գործարանը 2017թվականին մթերել է 1700 տոննա պտուղ-բանջարեղեն: Գործարանում 30 մարդ ապահովված են մշտական և 120 մարդ ժամանակավոր աշխատանքով:

Մարզի 95 անասնապահությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունները ունեն 3392 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 5985 գլուխ մանր եղջերավոր անասուններ, իսկ 74 այգեգործությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունները մշակում են 43 հա պտուղ և 54 հա խաղող: Աշխատանքներ են տարվում 2018թվականին ֆերմերային տնտեսությունների թիվն ավելացնել ևս 14-ով:

2017թվականի օգոստոս ամսին շահագործման հանձնվեց Զառիթափի սպանդանոցը, որտեղ մեկ հերթափոխում կարող է մորթվել 25 գլուխ խոշոր, 300 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Ստեղծվել է 10 մշտական աշխատատեղ:

Մարզում գործում են 19 սառնարանային տնտեսություններ 780 տոննա տարողությամբ, նախատեսվում է 2018 թվականին սառնարանային տնտեսությունների թիվն ավելացնել ևս 5-ով՝ 220 տոննա տարողությամբ:

Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու նպատակով կազմվել ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախպարարություն է ներկայացվել այծաբուծության զարգացման, ջերմոցային տնտեսությունների ստեղծման, թռչնաբուծության զարգացման, չրերի արտադրություն կազմակերպելու ներդրումային ծրագրեր, որոնցից 2-ը՝ չրերի արդադրության և այծի կաթից պանրի արտադրության ծրագրերն արդեն ֆինանսավորվել են:

ՀՀ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի Վայոց ձորի մարզային կառույցին ներկայացվել է 622 հայտ, որոնք միտված են բուսաբուծության և անասնաբուծության զարգացմանը: Այսօրվա դրությամբվ 56 շահառուների տրվել է 263.3 միլ. դրամի սուբսիդավորման վարկ, որի 70 տոկոսն ուղղված է անասուններ գնելուն, իսկ 30 տոկոսը՝ այգիներ հիմնելու, չրերի արտադրություն կազմակերպելու, սառնարանային տնտեսություն հիմնելուն:

Մարզում զգալի աշխատանքներ են տարվում կենդաներների տոհմային կազմի բարելավմման ուղղությամբ: ,,ՌԶԳ,, ՀԿ-ի միջոցով 2017թվականին 980 գլուխ կովեր ենթարկվել են արհեստական սերմնավորման, նպատակ ունենալով ավելացնել Շվից, Հոլշտեյն, Սիմենթալ և Կովկասյան գորշ ցեղի կենդաներների գլխաքանակը:

2018թվականին նախատեսվում է սերմնավորել 2500 գլուխ կովեր:

,,Արիդ,, այծաբուծական սպառողական կոոպերատիվն իրականացնում է այծերի ցեղի բարելավման աշխատանքներ, բարոլավված ուլիկները վաճառվում են գյուղացիական տնտեսություններին:

Մարզի գյուղատնտեսության արտադրության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է ոռոգելի հողատարածությունների ավելաց-մամբ, քանի որ վարելահողերից ոռոգելի է ընդամենը 2693 հա, կամ 17 տոկոսը:

Անհանդուրժելի է, որ նույնիսկ այս պայմաններում, շուրջ 740 հա ոռոգելի վարելահողեր չեն մշակվում, որից՝ 550 հա հողի սեփականատերերի կողմից, իսկ նրանց մի մասը բացակայում են հանրապետությունից, և 190 հա ոռոգման ներքին ցանցերի անսարքության պատճառով:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի 2018թվականի ծրագրում նախատեսվում է Բարձրունի բնակավայրում ոռոգման ջրագծի նախագծման աշխատանքներ, որի շինարարությունը հնարավորություն կտա ոռոգելի հողերն ավելացնել 70 հեկտարով: Համայնքներում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ եթե կառուցվի 56 կմ ոռոգման ջրագիծ և 11 կմ ներքին ցանց, ապա ոռոգելի հողատարածությունները կավելանա 1131 հեկտարով:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարության հետ քննարկվել է մարզի երեք /Ելփին, Խաչիկ, Վերնաշեն/ բնակավայրերում փոքր ջրամբարների կառուցման հնարավորությունները, տրվել տնտեսական և ֆինանսական գնահատական, որի իրականացման արդյունքում ոռոգելի հողատարածությունները կավելանա 1500 հեկտարով:

2017թվականին ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Թառաթումբ համայնքի

շահառուների կողմից ձեռք է բերվել մեկ միավոր գյուղատնտեսական տեխնիկա /Բելառուս/ կցվող գործիքներով: Աշխատանքներ են տարվում 2018թվականին շահառուների թիվն ավելացնելու ուղղությամբ:

2017թվականին տարածքային զարգացման հիմնադրամի և սոցիալական ներդրումների միջոցներով, որպես դրամաշնորհ Զառիթափի համայնքին հատկացվել է մեկ հատ հացահատիկհավաք կոմբայն և վեց հատ տարբեր մակնիշի տրակտոր: Շուտով Զառիթափում շահագործման կհանձնվի մեքենատրակտորային պարկը, որը կունենա 16 անուն գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ:

Մարզի համայնքներում առկա է 64 անուն տարբեր մակնիշի տրակտորներ և գործիքներ, որոնց սարքինությունը կազմում է 88.2 տոկոս: Աշխատանքներ են տարվում Զառիթափի օրինակով Արենի և Ջերմուկ խոշորացված համայնքներում մեքենատրակտորային պարկի ստեղծման ուղղությամբ:

2017թվականին գյուղատնտեսության բնագավառում ներդրվել է 180 մլն. դրամ / գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրեր, մասնավոր ներդրումներ/, իսկ 2018թվականին ներդրումմները կկազմեն 755 մլ. դրամ /գյուղատնտեսության նախարարության կողմից նախատեսվող ծրագրեր՝ պարարտանյութերի, ինենսիվ այգիներ հիմնելու, հակակրկտային ցանցերի տեղադրման, կաթիլային ոռոգման, հումքի վերամշակման, ոլորտին տրամադրվող վարկերի, գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորում, կենդանիների պատվաստում, գյուղատնտեսական ռեսուսների կառավարման ծրագրի շրջանակում մարզի համայնքներում նախատսվող աշխատանքներ /շինարարություն, գյուղ. տեխնիկա/ ընդամենը՝ 412.6 միլ. դրամ/: Մասնավորների կողմից ներդրումները կկազմեն 342.4 մլն. դրամ /անասունների գնում, այգիների հիմնում, կաթիլային ոռոգում և այլն/:

Մարզի գյուղացիկան տնտեսությունները գրեթե ամեն տարի կարկտահարությունից կրում են 250-300 մլն. դրամի վնաս:

Տեղակայված 7 հակակարկտային կայանները բավարար չեն ցանքատարածությունները կարկտից պաշտպանելու համար: Անհրաժեշտ է ևս 20 կայանների տեղադրում:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները 2017 թվականին թողարկել են 16 միլիարդ 844 միլիոն դրամի արտադրանք, նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 4.3 տոկոս:

2018թվականին նախատեսվում է սեփականաշնորհված, բայց չգործող հինգ օբյեկտների վերապրոֆիլման միջոցով կազմակերպել նոր արտադրամասեր /ավտոլվացման կետ, առևտրի կետ, հասարակական սնունդ, հյութերի արտադրություն և այլն/: Կներդրվի 80.0 մլն. դրամ, կստեղծվի 20-25 աշխատատեղ:

- Բնակչության զբաղվածության խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի ,,Ամուլսարի,, ոսկու հանքավայրի շահագործումը: Նշված հանքավայրի շահագործման համար 2017-2018թթ կներդրվի 370 մլն. ԱՄՆ դոլար: 2017թվականին իրականացվել է 94.1 միլիարդ դրամի ներդրումներ: Հանքավայրում աշխատողների թիվը կազմել է 1453 մարդ, որից 777 մարզից են: Նախատեսվում է 2018թվականին իրականացնել 50 միլիարդ 232 միլիոն դրամի աշխատանքներ:
- 2017թվականին համայնքային բյուջեների ֆինանսավորմամբ կատարվել է 164.3 մլն. դրամի շինարարական վերանորոգման աշխատանքներ /Զառիթափում ՄՏԿ կառուցում, փողոցների բարեկարգում, Եղեգնաձոր քաղաքում բազմաբնակարան շենքի տանիքի նորոգում, Գետափ բնակավայրի ճանապարհի բարեկարգում/, իսկ 2018 թվականին նախատեսվում է կատարել 409.6 մլն. դրամի աշխատանքներ /Զառիթափ հանայնքում խմելու ջրագծի ներքին ցանցերի նորոգում, Վերնաշեն բնակավայրի ՕԿՋ-ի վերանորոգում, Շատին բնակավայրում փողոցային լուսավորության անցկացում, Եղեգնաձոր քաղաքում

բազմաբնակարան շենքի հիմնանորոգում/: Մնացած հայտերը մշակման փուլում են:

- Բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ 2017 թվականին իրականացվել է 341.9 մլն. դրամի շինարարական աշխատանքներ /Սարավան բնակավայրում փողոցների լուսավորություն, Հորս բնակավայրում խմելու ջրագծերի կառուցում, Վայք քաղաքի մանկապարտեզի մասնաշենքի կառուցում,15 բնակավայրերում արոտների բարելավում/, իսկ 2018թվականին նախնական հաշվարկներով կկատարվի 65.0 մլն. դրամի աշխատանքներ / Կարմրաշեն բնակավայրում արոտների բարելավում, Վայք քաղաքի երկու բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և էներգոարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացում/:
- Մասնավոր ներդրողների ֆինանսավորմամբ2017թվականին կատարվել է 799.3 մլն. դրամի աշխատանքներ / հյուրանոցներ, հանդիսությունների սրահ, առանձնատներ, հանգստյան գոտիների կառուցում/, իսկ 2018թվականին նախատեսվում է կատարել 4 միլիարդ 213 միլիոն դրամի աշխատանքներ /հյուրատների կառուցում, Արինի բազմամետաղային հարստատուցիչ ֆաբրիկայի կառուցում, Վայք քաղաքի արևային կայանի կառուցում, ,,Թուֆեկյան,, ընկերության կողմից Արենի գյուղում հյուրանոցի կառուցում/:
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ 2018 թվականին Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 դպրոցի շինարարության համար կներդրվի 400 մլն. դրամ, Ռինդի մանկապարտեզի վերակառուցման և կոյուղու գծի կառուցման համար 135 մլն. դրամ, Ագարակաձորի և Վարդահովտի բնակավայրերում ՕԿՋ-ի կառուցման համար 75.8 մլն. դրամ, ընդամենը՝ 610.8 մլն. դրամ:
- 2017թվականին ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ կատարվել է 2 միլիարդ 871 մլն.դրամի աշխատանքներ /Արփա-

Սևան թունելի վերանորոգում, հրատապ ծրագրեր, պաշտպանության նախարարության համար Վայք քաղաքում բնակելի շենքի կառուցում, Ջերմուկ քաղաքի բարեկարգման աշխատանքներ/: 2018թվականին նախատեսվում է իրականացնել 4 միլիարդ 346 մլն. դրամի աշխատանքներ /Ջերմուկ քաղաքի բարեկարգում, Խնձորուտ բնակավայրի խմելու ջրագծի վերանորոգում, պաշտպանության նախարարության բնակելի շենքի շինարարկան աշխատանքներ/:

- Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով Եղեգնաձոր քաղաքում արեգակնային էլեկտրակայանների կառուցում՝ 500 մլն. դրամ, 13 հյուրատների վերանորոգում՝ 25 մլն. դրամի արժողությամբ:
- ՀՀ ԿԱ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ վարկային միջոցների հաշվին 2016-2017թթ Ազատեկ բնակավայրում խմելու ջրագծի վերանորոգման համար ներդրվել է 128.8 մլն. դրամ:
- 2017թվականին վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ /բարձրավոլտ էլ. ցանցեր, օդային գծերի վերնորոգման/ համար ներդրումները կազմել են 489.7 մլն. դրամ, իսկ 2018թվականին նախատեսվում է Իրան-Հայաստան բարձրավոլտ 3-րդ գծի կառուցման համար /մարզի վարչական տարածքում/ ներդնել 669.1 մլն. դրամ:
- Բարձրավոլտ էլ. ցանցերի կառուցում Շինուհայր-Հրազդան 2017թվականին ներդրվել է 5.1 միլիարդ դրամ:

2017թվականին մարզի ճանապարհաշինության բնագավառում ֆինանսական բոլոր աղբյուրների գծով իրականացվել է 492.4 միլ. դրամի աշխատանքներ /ճանապարհներ ձմեռային պահպանության, ընթացիկ բարեկարգման աշխատանքներ/:

2018թվականին նախատեսվում է իրականացնել 2 միլիարդ 988 մլն. դրամի աշխատանքներ /դեպի Հերհեր բնակավայրը տանող

ճանապարհի բարեկարգում, Գետափ բնակավայրի ճանապարհի բարեկարգում, դեպի Հորբատեղ բնակավայր տանող ճանապարհի բարեկարգում, կամուրջների վերանորոգում, հենապատի կառուցում և այլն/:

Նախատեսվում է 2018թվականին ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով սպասարկվող բնակավայրերի թիվը ավելացնել ևս չորսով:

Բնապահպանական խնդիրների լուծման շրջանակում Լիդիան-Արմենիան ընկերության կողմից նախատեսվում է ջերմուկ քաղաքում հինգ տարվա ընթացքում Ազգային պարկի ստեղծման վրա ներդնել 5 մլն. ԱՄՆ դոլար: 2018թվականին այդ նպատակներով կներդրվի 200.0 մլն. դրամ:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրներով 2017թվականին մարզի վարչական տարածքում կատարվել է 104.514 միլիարդ դրամի կապիտալ ներդրումներ, որից 94.1 միլիարդ դրամը Լիդիան Արմենիա կողմից, 10.4 միլիարդ դրամը ֆինանսավորման այլ աղբյուրներից:

2018թվականին կապիտալ ներդրումները կկազմեն 64.8 միլիարդ դրամ, որից Լիդիան- Արմենիա կողմից 50.2 միլիարդ դրամ, 14.6 միլիարդ դրամը ֆինանսավորման այլ աղբյուրներից:

2017թվականին մարզում ստեղծվել է 1850 աշխատատեղ, իսկ 2018 թվականին կստեղծվի 1400 աշխատատեղ:

,,Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակներում 2017թվականին մարզում կազմակերպված են անցել համապետական երեք շաբաթօրյակները: Արձանագրված 129 աղբավայրերից 112-ը փակվել են: Չորս աղբավայրերի /Մալիշկա, Քարագլուխ, Վերնաշեն, Սալլի/ ամբողջությամբ փակելու համար հաշվարկներ են ներկայացվել գումարային տեսքով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1070-Ն որոշմամբ, նշված աղբավայրերի փակում ծրագրի

նախագծահետազոտական աշխատանքների համր հատկացվել է 210 հազար դրամ:

Այժմ համայնքներում գործում են 13 աղբավայրեր, վերանայվել են մարզի համայնքներում աղբահանության սակագների հաշվարկման մեխանիզմները, գյուղական համայնքներում սահմանվել է աղբահանության մեկ միասնական շեմ: Աղբահանության համար համայնքապետերի կողմից բնակչության հետ կնքվել է 6360 պայմանագիր, իսկ իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների հետ 566 պայմանագիր: Պայմանագրերի կնքման աշխատանքները շարունակվում են:

2017 թվականին աղբահանության համար նախատեսվել էր գանձել 26.2 մլն. դրամ, գանձվել է 21.2 մլն. դրամ, կամ 80.7 տոկոս: Մինչդեռ ծախսը կազմել է 65.7 մլն. դրամ:

Համայնքներում աղբահանության աշխատանքները ծախսփակ եղանակով կատարելու համար, նախատեսվում է 2018թվականին գանձումները հանսցնել 78.2 մլն. դրամի: Հարցը քննարկվել ու համաձայնեցվել է բոլոր համայնքների ղեկավարների հետ:

Զբոսաշրջությունը մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից է, և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական ու որակական աճ: 2017թվականին զբոսաշրջիկների թիվը մարզում կազմել է 46000 մարդ, որը նախորդ տարվանից ավել է 9.5 տոկոսով: Ստեղծվել է 18 մշտական աշխատատեղ:

Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրի իրականացումը, Թուֆեկյան ընկերության կողմից Արենի գյուղում հյուրանոցային համալիրի կառուցումը, Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով 13 հյուրատների վերանորոգումը, Ջերմուկ քաղաքում երեք հյուրանոցների կառուցումը և վերակառուցումը, Վայք քաղաքում ,,Թայմուր,,

հյուրանոցի կցակառույցի կառուցումը նոր խթան կհանդիսանան զբոսաշրջության զարգացման համար:

Մարզում գործում են 48 հանրակրթական և ավագ դպրոցներ, որտեղ սովորում են 6368 աշակերտ, աշխատում են 1068 ուսուցիչներ, որոնցից՝ 971-ը ունեն բարձրագույն կրթություն:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը կազմում է 1:6, դասարանների միջին խտությունը՝ 12.7 է:

Հաջողությամբ իրականացվում է ,,Կայուն դպրոցական սնունդ,, ծրագիրը, որից օգտվում են 1-4 դասարանների 2401 երեխաներ:

2017թվականին ՀՀ կառավարության որոշմամբ Եղեգնաձորի և Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարանները վերակազմակերպվել են միացման ձևով միավորվելով համապատասխանաբար Եղեգնաձորի և Վայքի ավագ դպրոցներին:

ԴՏՀՏՀ-ի կողմից մարզի 1-3 դասարանների 1794 աշակերտների հատկացվել է ուսումնական պլանշետներ:

Մարզի 14 դպրոցներում գործում են նախակրթարաններ, որտեղ ընդգրկվել են 151 երեխաներ, իսկ 10 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որտեղ ընդգրկվել է 155 երեխաներ:

Կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթական որակի բարձրացման նպատակով, մարզպետարանի 2018 թվականի գործունեության ծրագրում ընդգրկվել են հետևյալ միջոցառումները.

1. Փոքրաթիվ աշակերտներ ունեցող դպրոցների աշակերտների ընդգրկում մոտակա բնակավայրի համեմատաբար շատ աշակերտներ ունեցող դպրոցի աշակերտական համակազմում, նրանց կրթությունը կազմակերպելով տեղի դպրոցական շենքում:
2. Դպրոցներում ժամանակակից սմարթ-դասարանների ստեղծում:

3. Ուսումնական ծրագրերով հագեցված գրասալիկներով /պլանշետներով/ ապահովում առանց ինտերնետ կապի:
4. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցները կադրերով ապահովելու նպատակով, տեղացի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին հնարավորություն տալ վերապատրաստման միջոցով համալրելու մանկավարժների թափուր տեղերը:

Մարզում գործում են 15 մանկապարտեզ 42 խմբով, որոնցում ընդգրկված են 1145 նախադպրոցական տարիքի երեխաներ:

Առողջապահության բնագավառում 2017 թվականին բյուջեյի նկատմամբ վճարովի ծառայությունների գումարը կազմել է 57676.8 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 16064 հազ. դրամով, կամ 38 տոկոս: Հետևողական աշխատանք է տարվում նշված գումարի ծավալի ավելացման և առկա թերությունների վերացման ուղղությամբ: Նախատեսվում է 2018թվականի վճարովի ծառայությունների գումարը հասցնել 62968 հազ դրամի:

Նախատեսվում է 2018 թվականին սկսել մարզային բժշկական նոր շենքի նախագծման աշխատանքները:

Մարզում կենսաթշակառուների թիվը կազմում է 10245 մարդ, տարեկան վճարվում է 4.9 միլիարդ դրամ կենսթոշակ, նպաստ են ստանում 2006 ընտանիք, վճարվում է 693.0 մլն. դրամ նպաստ:

2017թվականին մարզում գրանցվել են 1681 աշխատանք փնտրողներ, որը կազմում է նախորդ տարվա 80.5 տոկոսը, գործազուրկ են 1147 մարդ, որը կազմում է նախորդ տարվա 74.6 տոկոսը:

2017 թվականի մանրածախ ապրանքաշրջանառությունը կազմել է 7 միլիարդ 276 մլն. դրամ, իսկ ծառայությունների ծավալը 8 միլիարդ 332 մլն. դրամ:

Մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը կազմել է 145518 դրամ, որը կազմում է նախորդ տարվա 140 տոկոսը, իսկ ծառայությունների ծավալը՝ 166650 դրամ, որը կազմում է նախորդ տարվա 123 տոկոսը:

Միջին ամսական աշխատավարձը 2017թվականին կազմել է 145800 դրամ, որը կազմում է նախորդ տարվա 102.6 տոկոսը:

Մարզում աղքատությունը կազմում է 18.8 տոկոս:

Համաձայն վարչապետի հանձնարարականի հստակ աշխատանքներ են կատարվել համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ: 2017թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 101.0 տոկոսով, որը նախորդ տարվանից ավել է 146.9 մլն. դրամով, կամ 25.4 տոկոսով:

Նախատեսվում է 2018թվականին համայնքների բյուջեների սեփական եկամուտներն ավելացնել 173.7 մլն. դրամով, կամ 24.1 տոկոսով:

Եթե 2016թվականին համայքային բյուջեների սեփական եկամուտները մեկ շնչի հաշվով կազմել է 9.6 հազ դրամ, 2017 թվականին 12 հազ. դրամ, իսկ 2018թվականին պլանավորվում է 14.8 հազ. դրամ, կամ աճը 2016թվականի նկատմամբ կազմում է 154 տոկոս:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյան

02.02.2018թ